

Մոռացված կեղծիք

Հրաչիկ Միմոնյան, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ

Արդյո՞ք Նիզամի Գյանջևին պատկանում է աղբբեջանական մշակույթին.

Անցյալ տարվա դեկտեմբերի 27-ին «Սովետական կուլտուրա» թերթը տպագրել էր փիլիսոփայական գիտությունների դոկտոր Միխայիլ Կասախնի «Հողի բաղադրությունը ցեխ չի պարունակում» խորագրով հոդվածը, որտեղ նա մասնավորապես գրում է, որ միջնադարյան մեծ մտածող, պարսկական պոեզիայի փառքերից մեկը՝ Նիզամի Գյանջևին ոչ մի կապ չունի աղբբեջանական մշակույթի հետ և որ գուր են նրան յուրացնելու, նրա վաստակն աղբբեջանականացնելու փորձերը թեկուզ հենց այն պատճառով, որ Նիզամու ապրած ժամանակներում աղբբեջանցիներ դեռ չկային:

Մենք Հայաստանում, և ոչ միայն այստեղ, վազուց լավ գիտենք, որ Նիզամին, իրոք, որևէ առնչություն չունի և չէր էլ կարող ունենալ աղբբեջանական գրականության և ընդհանրապես Աղբբեջանական մշակույթի հետ: Գիտենք, որ ահա կես դարից ավելի է, ինչ աղբբեջանցի գիտնականները սեփականել են պարսկական գրականության հսկաներից մեկին և ամեն կերպ ճգնում են աշխարհին ապացուցել անապացուցելին:

Մ. Կապուստինի հիշյալ հոդվածը ինձ մղեց գրելու Նիզամի Գյանջևու մասին իմ այս նոթերը, մի բանաստեղծի ու մտածողի, որի ճշմարիտ ու ազնիվ արվեստը դեռ պատանեկության օրերից հրապուրել են ինձ:

Հարկ եղավ նորից աչքի անցկացնել Նիզամու մասին հրապարակի վրա եղած գրականագիտական աշխատությունները: Եվ որքան խորանում էի նյութի մեջ. այնքան համոզվում էի, թե որքան ճշմարիտ է մոսկվացի գիտնականը. երկար տարիների լուռ համակերպման մթնոլորտում վերջապես հայտնվեց մեկը, որը քաջություն ունեցավ ճշմարտության աչքերին ուղիղ նայելու և արդարամտության դասեր տալու նաև մեզ: Նորից ու նորից վերընթերցելով պարսիկ բանաստեղծի գործերը, զարմանքս գնալով մեծանում էր, թե ինչպես եղավ, որ օրը ցերեկով հնարավոր դարձավ սեփականել հարևան պարսիկ ժողովրդի հպարտությունը համարվող մեծերից մեկին:

Համաշխարհային Նիգամիագիտությունը բանաստեղծի ստեղծագործության պատկանելության մասին

Հրապարակելով սույն հոդվածը, մենք, իհարկե, խորապես գիտակցում ենք, որ սա մեր կողմից հարցի լուսաբանման առաջին փորձն է, ուստի, բնականաբար, չի կարող զերծ լինել վրիպումներից և թերությաններից: Բայց մենք մտադիր ենք շարունակել այս ուղղությամբ մեր հետազոտությունը՝ ճշմարտությունը բացահայտելու և հանրությանը ներկայացնելու համար:

Արտասահմանում լույս տեսած, բոլոր ուսումնասիրություններում և գրական աղբյուրներում (առանց բացառության), լինեն դրանք գերմաներեն, անգլերեն, պարսկերեն թե ուրիշ լեզուներով, Նիգամին համարվել և համարվում է պարսիկ բանաստեղծ և մտածող: Ու դա մեր երկրի սահմաններից դուրս երբեք վիճաբանության առարկա չի եղել և չէ: Նիգամու ով լինելն այդպես միանշանակ է տրված արտասահմանում լույս տեսած նրա ստեղծագործությունների բոլոր հրատարակություններին կցված առաջաբաններում, վերջաբաններում և ծանոթագրություններում, ինչպես նաև բոլոր հատուկ ուսումնասիրություններում:

Նիգամի անունը Եվրոպայում առաջին անգամ հիշատակվել է Ֆրանսիայում՝ 1697 թվականին, արևելագետ դ, էրբելոյի «Արևելյան գրադարան» աշխատության մեջ: Այդ շրջանից սկսած եվրոպական գիտությունը զբաղվել է Նիգամու պոեզիայով, ուսումնասիրել նրա կենսագրությունը: Բայց պարսիկ բանաստեղծի և մտածողի նկատմամբ հետաքրքրությունը Եվրոպայում մեծացավ հատկապես 19-րդ դարի սկզբներից: 1818 թ. Վիեննայում լույս տեսավ արևելյան գրականության տաղանադավոր գիտակ Համմեր-Պորզտաի «Պարսկական բելետրիստիկայի պատմությունը», ուր հեղինակը, հենվելով Նիգամու մասին մինչ այդ եղած գրականության վրա և ելնելով նրա պոեմների՝ իրեն հայտնի տարբերակների վերլուծությունից, տվեց մեծ մտածողի կենսագրականը, ինչպես նաև թարգմանաբար հատվածներ գետեղեց Նիգամու պոեմներից: Դա, ըստ էության, մեծ բանաստեղծի ստեղծագործության առաջին թարգմանությունն էր Եվրոպայում: Այնուհետև իրար հաջորդեցին Նիգամու մասին

եվրոպական հեղինակների նոր ուսումնասիրությունները՝ անգլիացի Աուգլիի «Կենսագրական նոթեր պարսիկ բանաստեղծների մասին» (Լոնդոն, 1844 թ.), Ի. Շերրի «Համաշխարհային գրականության պատմություն» (1851 թ.), հունգար արևելագետ Վ. Բախերի «Նիզամու կյանքը և ստեղծագործությունը» (Լայպցիգ, 1871թ.), ֆրանսիացի Բարբյեդը Մեյնարի «Պոեզիան Պարսկաստանում» (Փարիզ, 1877թ.), իտալացի Ի. Պիցայի «Պարսկական պոեզիայի պատմություն» (Թուրին, 1894 թ.), հայտնի իրանագետ Գ. Էտեի «Ուրվագծեր նոր պարսկական գրականության» (1896 թ.), գերմանացի արևելագետ Պ. Հորնի «Պարսկական գրականության պատմություն» (Լայպցիգ, 1901 թ.), անգլիացի Է. Բրոունի քառահատոր «Պարսկական գրականության պատմություն» (Լոնդոն, 1902 -1924 թթ..) աշխատությունները, Մ. Խոուտրամայի, Ռ. Լևիի և ուրիշների հետազոտությունները: Այդ բոլոր գրքերում, առանց բացառության, Նիզամին իրավացիորեն ներկայացված է որպես պարսիկ բանաստեղծ ու մտածող և ակնարկ անգամ չկա նրա աղբյուրների լինելու մասին:

Ներկա դարում արտասահմանում լույս տեսած Նիզամուն վերաբերող բոլոր աշխատություններում նույնպես նա համարվում է պարսիկ մեծ բանաստեղծ և մտածող: Նիզամին այդպես է ներկայացված չեխ պրոֆեսոր Յան Ռիպկայի ուսումնասիրություններում, մասնավորապես նրա «Իրանական օրագրում» (1946), պարսիկ բանաստեղծ և գրականագետ Վահիդ Դաստդիրդիի հետազոտություններում: Մեծ արժեք են ներկայացնում վերջինիս 1937-1940 թթ. հրատարակած Նիզամու ստեղծագործությունների լիակատար ժողովածուն և դրան կցված առաջաբանն ու ծանոթագրությունները:

1977 թ. Իտալիայում հրատարակվել է հողվածների մի ժողովածու նվիրված պարսիկ բանաստեղծ Նիզամուն և Ալեքսանդր Մեծի մասին պարսկական ավանդությանը, որտեղ զետեղված են Իրանի, Իտալիայի, ԱՄՆ-ի, Շվեյցարիայի գիտնականների հողվածները, և խոսք անգամ չկա աղբյուրազանցական գրականության հետ մեծ բանաստեղծի որևէ առնչության մասին:

Նիզամիազիտությունը հարուստ ավանդույթներ ունի նաև Ռուսաստանում: Դեռևս 1826 թ. Կազանում պրոֆեսոր Էրդմանը հրատարակում է կենսագրական տվյալներ Նիզամու մասին: 1844 թ. նա նորից է անդրադառնում Նիզամուն և ռուս ընթերցողին համեմատաբար ընդարձակ տեղեկություններ տալիս Նիզամու՝ իբրև պարսիկ բանաստեղծի մասին:

Բրոկհաուզի և Էֆրոնի հայտնի հանրագիտարանային բառարանի 1897 թ. լույս տեսած 41-րդ հատորում գետեղված է արևելյան պոեզիայի գիտակ, պարսկական միջնադարյան գրականության տաղանդավոր հետազոտող, հետազայում Ուկրաինական ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Ազաֆանգել Եֆիմովիչ Կրիմսկու (1871—1942 թթ.) «Նիզամի» հոդվածը, որտեղ ասված է «Նիզամի: Պարսկական լավագույն ռոմանտիկական բանաստեղծ, ծնվել է Կումում, սակայն կրում է «Գյանջևի» մականունը, քանի որ կյանքի մեծ մասն անցկացրել է Գյանջայում (այժմ՝ Ելիզավետպոլ) և այնտեղ էլ մահացել է»: Այս հոդվածը Ա. Կրիմսկին հետազայում ընդլայնում և գետեղում է իր «Պարսկաստանի պատմություն» աշխատության մեջ. (առաջին հրատ.՝ 1900, երկրորդ հրատ.՝ 1906, երրորդ հրատ.՝ 1912): Այստեղ Կրիմսկին մի անգամ ևս Նիզամու ստեղծագործությունը զնահատում է միանշանակ՝ իբրև պարսկական պոեզիա:

Մինչհեղափոխական Ռուսաստանի հեղինակավոր մյուս բոլոր հանրագիտարաններում Նիզամին դասվել է պարսիկ գրողների շարքը: «Գրանատ» հանրագիտարանային բառարանում, օրինակ, նա բնորոշված է որպես «պարսիկ ռոմանտիկական բանաստեղծ»:

Խորհրդային տարիներին նույնպես, ընդհուպ մինչև 1938 թվականը, Նիզամին միանշանակ դասվել է պարսիկ բանաստեղծների շարքը:

1924—1927 թթ. խորհրդային իրանագետ Յու. Ն. Մառը հրատարակում է հոդվածների մի շարք Նիզամու՝ որպես պարսկական բանաստեղծի մասին: 20-ական թվականների սկզբներից արևելագիտության բնագավառ ոտք դրեց պարսկական գրականության հայտնի մասնագետ, հետազայում ԽՍՀՄ ԳԱ թղթակից.անդամ Եվգենի Էդուարդովիչ Բերտելսը (1890-1957 թթ.): Այդ շրջանից սկսած նա գրեց մի շարք մնայուն,

արժեքավոր աշխատություններ, որոնցում Նիզամուն անվերապահորեն համարում է պարսիկ գրող և մտածող, պարսկական միջնադարյան գրականության դասական: 1928 թվականին Լենինգրադում լույս տեսավ նրա «Ուրվագիծ պարսկական գրականության պատմության» ուսումնասիրությունը, ուր, մասնավորապես, կան այսպիսի տողեր. «Հոգեբանական վերլուծությունը Նիզամու տարբերակիչ հատկանիշն է, որը նրան խստորեն առանձնացնում է Պարսկաստանի մյուս բոլոր բանաստեղծներից և մոտեցնում նրան եվրոպական գրականությանը»: Բերտեալի այս աշխատությունը, ինչպես նաև Նիզամու մասին նրա նոթերը, զետեղված են «Վոստոկ» խորագրով ժողովածուի մեջ, որը լույս է տեսել Մոսկվայում, 1935 թ. և որտեղ նա, ինչպես մինչև այդ աշխարհի բոլոր նիզամիագետները, վերստին նշում Նիզամու պատկանելությանը պարսկական գրականությանը: 1933 թ. առանձին գրքով լույս է տեսնում Նիզամու «Խոսքով և Շիրին» պոեմը, որին կցված առաջաբանի հեղինակ Ե. Դունանսկին գրել է «Նիզամին պարսիկ դասականների շարքում ռոմանտիկական պոեզիայի ամենավառ ներկայացուցիչն է, որն ունեցել է բազմաթիվ ընդօրինակողներ և հետևորդներ»:

Այսպիսով, մինչև մեր դարի 30-ական թվականների վերջերը ԽՍՀՄ-ում լույս տեսած որևէ հրատարակությանն մեջ անհնար է գտնել գեթ մի հիշատակություն առ այն, թե Նիզամու պոեզիան դուրս է պարսկական գրականությունից:

Ե՞րբ և ինչպե՞ս պարսիկ Նիզամին դարձավ Ադրբեջանցի

Նիզամուն ադրբեջանցի դարձնելու պրոցեսը մեր երկրում սկսվել է Ստալինյան բռնակալության ամենամռայլ տարիներին: Մեծ մտածողը եթե մի հրաշքով կենդանանար, զարմանքից կապշեր, թե վերջին կես դարում ինչպիսի հետևողականությամբ և ինչ վիթխարի ջանքեր են գործադրվել իրեն ադրբեջանցի, այսինքն՝ մի ժողովրդի ներկայացուցիչ դարձնելու համար, որի առաջին ցեղերը Անդրկովկաս են թափանցել իր մահվանից շատ հետո: Այդ գործը ձեռնարկվեց երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին, երբ մեր երկիրը նախապատրաստվում էր դիմագրավելու վերահաս արհավիրքին: Անհրաժեշտ էր բարձրացնել երկրի

ժողովուրդների ազգային հայրենասիրական ոգին, մանավանդ, որ 1937 թ. ստալինյան անօրինականությունները և մասսայական բռնությունները այդ ոգին հայտնի չափով կոտրել էին հանրապետություններում: Ահա ինչու ձեռնարկվեցին մի շարք միջոցներ ժողովրդի հայրենասիրական ոգին բարձրացնելու համար: Այդ նպատակին ուղղված ուրիշ քայլերի թվում էին վրաց միջնադարյան գրականության դասական Շոթա Ռուսթավելու «Վագրենավորի» 800-ամյակի և հայ ժողովրդական էպոսի՝ «Սասունցի Դավթի» 1000-ամյակի լայն տոնակատարությունները: Հարց առաջացավ ադրբեջանական որևէ գրողի կամ գործչի հոբելյանը ևս համամիութենական մասշտաբով նշելու անհրաժեշտության մասին: Փնտրեցին, փնտրեցին, բայց հարմար մեծություն չգտնվեց, փնտրտուքն անհաջողությամբ ավարտվեց: Սակայն Ստալինն անձամբ էր ցուցում տվել գտնելու ադրբեջանցի համապատասխան գործչի, այն էլ՝ ոչ պակաս հին: Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի այն ժամանակվա առաջին քարտուղար Միրջաֆար Բադիրովը, Ստալինի ամենահավատարիմ նվիրյալներից մեկը, եռանդով գործի անցավ: Զորահավաքի ենթարկվեցին ոչ միայն Ադրբեջանի մտավորական ուժերը: Վերուստ տրված հրամանով գործի դրվեցին նաև մոսկովյան և լենինգրադյան մի շարք գիտնականներ: Այս անգամ փնտրտուքը տարավ դեպի Նիզամին, որի ծննդյան 800-ամյակը լրանում էր 1941 թվականին: Կարթը կարծես ճիշտ էր իջեցվել, բռնելու մի տեղ կար՝ մեծ բանաստեղծը որոշ ժամանակ ապրել է Գյանջայում:

Կարող է հարց առաջանալ, թե ինչպես պատահեց, որ արևելագիտության լենինգրադյան և մոսկովյան հայտնի դպրոցներում կրթված գիտնականներից ոմանք համաձայնվեցին դիմել ուղղակի կեղծիքի և մասնակից դարձան Նիզամուն ադրբեջանականացնելու անազնիվ գործարքին:

Հիմնական պատճառը պատժվելու սարսափն էր, իսկ այն ժամանակվա պատժի չափերի ու ձևերի մասին այսօր բոլորին է հայտնի: Չմոռանանք, որ 1938-1939 թվականներն էին, այսինքն այն ժամանակը, երբ դեռ չէր ցրվել 1937-ի մղձավանջը, երբ դեռ շարունակվում էին գնդակահարություններն ու բանտարկությունները: Այդ հեղձուցիչ մթնոլորտում կենտրոնի գիտնականներից ոմանք չկարողացան մնալ իրենց բարձրության վրա, գործարքի մեջ մտան սեփական խղճի հետ: Նրանք սխալ համարեցին

Նիզամու մասին նախկինում իրենց իսկ գրած մեծարժեք աշխատությունները, ավելին, մեղանչելով ճշմարտության դեմ, սկսեցին զանազան միջոցների դիմել, փորձելով ապացուցել, թե Նիզամին պատկանում է ադրբեջանական գրականությանը:

Վերը նշված Ա. Ե. Կրիմսկին, որը մինչ այդ անվերապահորեն Նիզամուն համարում էր պարսկական միջնադարյան պոեզիայի խոշորագույն աստղ, 1937 թ. հետո սկսեց գրել այնպես, ինչպես պահանջում էին իշխանությունները: Բանաստեղծի հոբելյանի նախապատրաստման ընթացքում նա շարադրեց «Նիզամին և նրա ժամանակակիցները» մենագրությունը, որն այն ժամանակ չհաջողվեց լույս ընծայել սկսված պատերազմի պատճառով: Իր նախկին տեսակետը կտրուկ վերանայելով, Կրիմսկին առանց աչքը թարթելու Նիզամուն դարձրեց ադրբեջանցի, իսկ նրա պոեզիան՝ ադրբեջանական:

Նույն կերպ վարվեց նաև Ե. Է. Բերտելսը: Դրան, անշուշտ, նպաստեց նաև այն, որ Նիզամու 400-ամյա հոբելյանի նախապատրաստման շրջանում նա ընդհանուր ղեկավար կարգվեց ադրբեջանցի և ոուս գիտնականներից կազմված այն հանձնաժողովի, որի առջև խնդիր էր դրված ամեն կերպ ապացուցել Նիզամու ադրբեջանցի լինելը: Բերտելսը հայտարարեց, թե նախորդ տարիների իր հետազոտությունները «այժմ հնացել են»:

1938-40 թթ. ընթացքում Բերտելսը Նիզամու մասին գրեց և մեկը մյուսի հետևից լույս ընծայեց մի շարք հոդվածներ: 1940 թ ավարտեց նաև մի ծավալուն մենագրություն, որն այդ ժամանակ չհասցրեց հրատարակել՝ դարձյալ պատերազմի պատճառով:

Այդպես դրվեց կեղծիքի հիմքը, այսպես կեղտաջուրը գնաց և հոսեց: 1939 թ. աշնանը Մոսկվայում Մամեդ Վուրդունի խմբագրությամբ ոուսերեն լույս տեսավ «Ադրբեջանական պոեզիայի անթոլոգիան», որտեղ մի քանի հատվածներ գետեղվեցին Նիզամու պոեմներից: Մոսկվայում տպագրվեց նաև ադրբեջանական գրականության պատմության մի «ուրվագիծ», որն արդեն կասկած չէր թողնում, որ ադրբեջանցիները որոշել են ոչ միայն սեփականացնել Նիզամուն, այլև պարսկական պոեզիայի ուրիշ ներկայացուցիչների: Նույն թվականին Բաքվում հրապարակ հանվեց Մ. Ռաֆիլիի «Նիզամի: Կյանքը և սատեղագործությունը» գրքույկը, որը 1941 թ. վերահրատարակեց

Մոսկվայի Քաղհրատը: 1940-41թթ. Նիզամու հոբեյանական կոմիտեն Բաքվում հրատարակեց հոդվածների երեք ժողովածու՝ «Նիզամի» ընդհանուր խորագրով:

Եվ այսպես պատերազմի նախօրյակին հրապարակ հանվեց ստալինյան շրջանի բյուր ու բազում կեղծիքներից ևս մեկը, որը համարվեց անառարկելի ճշմարտություն ու ստացավ գոյության իրավունք: Զգուր չէ, որ ադրբեջանցի «գիտնականները» դեռ այն ժամանակ գրում էին, թե Նիզամու մասին մինչ այդ լույս տեսած աշխատությունները թերի են, և նոր-նոր է դրվում նիզամիագիտության հիմքը: Ե. Բերտելսի «Նիզամի և Ֆիզուլի» գրքի առաջաբանի հեղինակ Գ. Ալիևը գրում է. «Մեր երկրում Նիզամու կյանքի և ստեղծագործության խոր և համակողմանի ուսումնասիրությունն սկսվել է 1938-39 թթ»:

Պատերազմի ավարտից հետո Ադրբեջանի ղեկավարությունն արդեն բարձրացրեց ադրբեջանցի դարձած բանաստեղծ Նիզամու հոբեյանը լայնորեն նշելու հարցը:

1947 թ. Սեպտեմբերի 22-28-ը տեղի ունեցան Նիզամուն նվիրված հանդիսությունները: Բաքվում կայացավ ԽՍՀՄ գրողների միության ընդլայնված նիստը՝ Ադրբեջանի գրողների միության վարչության պլենումի հետ համատեղ: Կիրովաբադում (Գանձակ), որտեղ ապրել էր Նիզամին, սկսվեց Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի նստաշրջանը, որը այնուհետև տեղափոխվեց Բաքու և այնտեղ ավարտեց իր աշխատանքը: Բաքվում հսկայական տպաքանակներով լույս տեսան Նիզամու կյանքն ու ստեղծագործությունը խեղաթյուրող «գիտահետազոտական» աշխատություններ, մենագրություններ, գրքույկներ, հոդվածներ: Ադրբեջանական թատրոնները պատրաստեցին ներկայացումներ, բեմադրվեց «Նիզամի» օպերան, գրվեց սիմֆոնիա, լույս տեսավ բանաստեղծի խոսքերով ռոմանսների ժողովածու: Այդ անթիվ-անհամար հրապարակումների, գեղարվեստական ստեղծագործությունների հեղինակները, առանց բացառության, մի ընդհանուր ցուցումով կրկնում էին Նիզամու ադրբեջանցի լինելու և պարսկական մշակույթի հետ կապ չունենալու մասին հնարավոր թեզը:

1947 թ, սեպտեմբերի 27-ին Նիզամու ծննդյան 800-ամյակին նվիրված հանդիսավոր նիստ տեղի ունեցավ Երևանում, որը անցավ նույն սցենարով: Հայ

գրողներից մեկը այդ օրերին նույն հախուռն ճնշման տակ գրեց. «Բուրժուական գրականագիտությունը «գոհերից» մեկն էր Ադրբեջանի հանճարեղ քանաստեղծ Նիզամի Գյանջևին, որ երկար ժամանակ օտարացված էր հարազատ ժողովրդից: Սովետական գրականագիտությունը ադրբեջանական ժողովրդին վերադարձրեց նրա ազգային հանճարը...» («Սովետական Հայաստան», 28 սեպտեմբերի, 1947 թ.):

Ա. Կրիմսկու «Նիզամին և նրա ժամանակակիցները» լույս տեսած գրքին կցված ներածական հոդվածի հեղինակ Գազանֆար Ալինն ընթերցողին տեղյակ է պահում, որ մենագրության միակ լրիվ մեքենագիր օրինակը, որ անձամբ պատրաստել է ինքը՝ հեղինակը, պահվում է Բաքվում՝ Նիզամու անվան ինստիտուտի արխիվում: Հենց այս ձեռագրի վրա էլ աշխատել են ադրբեջանցի «գիտնականները»: Իսկ թե նրանք նման դեպքերում ինչպես են աշխատում, մեզ արդեն հայտնի է: Ներածականում Գ. Ալինը գրում է. «Վերջին տասնամյակում գլխավորապես Արևելքի ժողովուրդների պատմության վերաբերյալ լույս են տեսել զգալի թվով հետաքրքիր աշխատություններ թե՛ մեր երկրում, թե՛ արտասահմանում: Հարկավոր էր մի շարք կարևոր ուղղումներ մտցնել Ա. Ե. Կրիմսկու աշխատության մեջ... Այդ ամենը պահանջում էր Ա. Կրիմսկու աշխատությունը հարաբերակցել վերջին հրապարակումների հետ: Այդ կարևոր աշխատանքը կատարել են Ադրբեջանական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Զ. Մ. Բունիաթովը...»: Բնավ չենք կասկածում, որ ուղղումներ մտցնելու անվիճելի ընդունակություններով օժտված Զիա Բունիաթովը իրոք այստեղ էլ «կարևոր աշխատանք» է կատարել:

Ինչևիցե, Կրիմսկու մահվանից հետո «խմբագրված» և «շտկված» առաջաբանում կարդում ենք. «Հարկավոր է հաստատապես գիտակցել և ընդունել, ադրբեջանցի Նիզամին, իհարկե, ինչ խոսք, հարազատ ադրբեջանական քանաստեղծ է...»: Եվ արդեն մարսած համարելով յուրացումը և ավելի հեռուն գնալով, Գ. Ալինը իրեն և ադրբեջանցի իր գործընկերներին հատուկ «տրամաբանությամբ», շարունակում է. պարսկական գրականության վրա «նրա (Նիզամու Հ. Ս.) ստեղծագործությունը ունեցել է հիրավի խոր, կարելի է ասել, վճռական ազդեցություն»: Ահա թե ինչու շարունակսւմ է Գ. Ալինը «ադրբեջանական ժողովուրդը անսահմանորեն հպարտանում է նրանով, որ իր հանճարեղ զավակներից մեկի ստեղծագործությունը, որ որոշակի պատմական

պայմանների պատճառով գրվել է Ֆարսի լեվով, իր հավերժ կենդանի գաղափարների և կերպարների, առաջավոր աշխարհայացքի և մարդասիրական սկզբունքների շնորհիվ հզոր գործոն է հանդիսացել ամբողջությամբ վերցրած ինչպես պարսկական գրականության, այնպես էլ դրա կրոնական ազգային դրսևորումների զարգացման համար» (նույն տեղում, էջ 18—19):

Կեղծարարի ասելով Նիզամին խոր ազդեցություն է թողել նաև իր և հետագա դարերի Միջին Ասիայի, Կովկասի, արաբական երկրների, Հնդկաստանի, ավելի ուշ՝ նաև Թուրքիայի և այլ երկրների դրական պրոցեսների վրա: Նրա բարերար ազդեցությամբ են ձևավորվել քուրդ Ֆիզուլին, մեծ Ալիշեր Նավոյին, հերաթցի պարսիկ բանաստեղծ Արֆուռահման Ջամին, հնդիկ բանաստեղծ Խոսրով Դեհլևին և ուրիշներ:

Աշխարհի շատ գրականագետների պես հայ գրականագետներն անցյալում միշտ էլ Նիզամուն համարել են պարսիկ, իսկ նրա ստեղծագործությունը՝ պարսկական: Բայց դա մինչև, 1939-40 թվականները: Սովետահայ գրականագետները, պատմաբանները, գրողները հասկանալի պատճառներով չէին կարող չկրկնել վերևից հրահանգվածը: Ակադեմիկոս Հովսեփ Օրբելուց բացի. քիչ թյուրիմացություններ չստեղծեց նաև Մարիետա Շահինյանը: Երբ Հ. Օրբելին հետպատերազմյան տարիներին շարունակում էր իր ջանքերը Նիզամուն ադրբեջանականացնելու համար, այդ նույն ժամանակ Մ. Շահինյանը, ձեռքի տակ ունենալով անհրաժեշտ տվյալներ, հիմք ընդունելով Նիզամու կյանքն ու նրա գրական ժառանգությունը կեղծած կենտրոնի մի քանի մասնագետ-գիտնականների և ադրբեջանի վայ-հետազոտողների «ուսումնասիրությունները», հրատարակեց «Էտյուդներ Նիզամու մասին» էսսեն (Երևան, 1955, ռուս.), որը զարմանք է պատճառում իր մակերեսայնությամբ և տաղանդաշատ գրողին ոչ հատուկ անլրջությամբ:

Հանրահայտ է, որ Նիզամին ծնվել է Պարսկաստանի Կում քաղաքում, բայց հետագայում տեղափոխվել ու հաստավել է Գյանջայում և հանգամանքների բերումով այնտեղ ապրել երկար տարիներ: Սա երբեք վիճաբանության առարկա չի եղել մինչև մեր դարի 30-ական թվականների վերջեր: Այդ են վկայում միջնադարյան գրական

աղբյուրները: Բայց 30-ական թթ. վերջերից սկսած Ե. Է. Բերտելսը, աղբբեջանցի իր գործընկերների համակողմանի աջակցությամբ ամեն ջանք թափեց ապացուցելու, թե Նիզամին ոչ միայն ապրել է Գյանջայում, այլև ծնվել է հենց այնտեղ, որ Կուսը նրա ծննդավայրը չէ:

Չնայած Նիզամին Գանձակում ապրել և գործել է այն ժամանակ, երբ այսօրվա աղբբեջանցիների նախնիները իրանական բարձրավանդակի վրայով դեռ չէին թափանցել Անդրկովկաս, պատմության աղբբեջանցի կեղծարարները ճգնում են ապացուցել, թե Գանձակում Նիզամու ապրած ժամանակ քաղաքը աղբբեջանական է եղել: Այլապեսս, հակառակ դեպքում, անմիջապես հօդս է ցնդում Գանձակի՝ իբրև Նիզամու ծննդավայրի մասին խախուտ կոնստրուկցիան:

Ինչպես հայտնի է, մինչև 9-րդ դարի կեսերը Գանձակ անունը չի հիշատակվում պատմական ոչ մի հիշատակարանում: Բերտելսը ընդունում է, որ Գանձակի հիմնադիրները և բնակիչները եղել են Բերդա՛ա (հայկական Պարտավ քաղաքի արաբական անվանումը) քաղաքից եկածները, բայց թե դրանք էթնիկական ինչ ծագում են ունեցել, նա այդ մասին ոչ մի խոսք չի ասում: Չեն ասում նաև նրա աղբբեջանցի աշակերտները: Նրանց փոխարեն մենք ասենք, դրանք եղել են հայեր և արաբներ: Ընդ որում կեղծարարները ամեն կերպ փորձում են հատկապես, ստորակայել հայերի խաղացած դերը, անընդհատ ոտնձգություններ են կատարում պամական Հայաստանի այդ մասի հայկական մշակութային արժեքների նկատմամբ՝ դրանք համարելով աղբբեջանական, (Փակագծերում ասենք որ, օրինակ, հիշատակելով հայ պատմիչ Կիրակոս Գանձակեցուն, նրանք կամ չեն նշում նրա իսկական, ազգությունը, ինչպես դա անում Բերտելսը, երբ հայ պատմիչին անվանում է «այն ժամանակվա աղբբուր», կամ ուղղակի համարում են աղբբեջանցի: Եվ դա նաև այն նպատակով, որ Գանձակ քաղաքի անունը չկապվի գանձակեցի հայ պատմիչի անվան հետ):

Ճշմարտությունն այն է, որ Նիզամին ապրել է ոչ թե աղբբեջանական, այլ հայկական Գանձակ քաղաքում: Այո, Գանձակը կառուցվել է իբրև հայկական քաղաք, այն հայկական էր մնում նաև Նիզամու ապրած տարիներին և դրանից հետո: Բայց

Գանձակում մշտապես բնակվում էին նաև զգալի թվով արաբներ, պարսիկներ, քրդեր, արաբ և պարսիկ պաշտոնյաներ, բայց ոչ երբեք ադրբեջանցի թուրքեր:

ՆԻՋԱՍՈՒ ԾՆՈՂՆԵՐԸ, ԱԶԳՈՒԹՅՈՒՆԸ

Նիզամուն ադրբեջանցի դարձնելու ճիգերի ընթացքում ադրբեջանական բերտելյան կամպանիայի «փաստարկներից» մեկը վերաբերում է Նիզամու էթնիկական, ազգային պատկանելությանը: Նրանք պնդում են, թե բանաստեղծը ծնունդով թուրք-ադրբեջանցի է, դրա համար չունենալով ոչ մի փաստ, ցանկալի ներկայացնելով որպես իրականություն:

Պատմական որևէ աղբյուրում այդ տեսակետը հիմնավորող թռուցիկ հիշատակությունն անգամ չկա: Միջնադարյան որոշ ձեռագրերից բացի Նիզամու պարսիկ լինելու մասին առանձին տեղեկություններ կարելի է քաղել անմիջականորեն բանաստեղծի ստեղծագործություններից: Դեռևս 1871 թ. լույս ընծայած «Նիզամու կյանքը և ստեղծագործությունները» մենագրության մեջ երիտասարդ հունգար գիտնական Վ. Բախերը հետազոտողների ուշադրությունը բևեռում էր այն բանի վրա, որ բանաստեղծի կենսագրության շատ մանրամասներ արտացոլված են նրա ստեղծագործություններում, մասնավորապես՝ պոեմներում, և որ անհնար է ամբողջացնել նրա գիտական կենսագրությունը, առանց հաշվի առնելու այդ մանրամասները:

Օրինակ, «Լեյլի և Մեջնուն» պոեմում բանաստեղծը պատմում է իր տոհմի, նրա առավել նշանավոր մարդկանց, իր ծնողների և մյուս մերձավոր հարազատների մասին: Պոեմի 18-րդ պատումում, որը կրում է «Հիշատակում մորս» վերնագիրը, Նիզամին գրում է. «Հին հրդեհից է իմ մայրը սերել»

Նա, ի ցավ սրտիս, վաղուց է մեռել»

(Թարգմ. Ա. Պողոսյանի)

Այսպիսով, ինքը՝ բանաստեղծը, հաստատում է, որ իր մայրը ազգությամբ քուրդ է եղել: Նույն պոեմի 15-րդ՝ «Հիշատակում հորս» վերնագրով պատումի մեջ Նիզամին հաղորդում է, որ իր պապը Զաքին էր, հայրը՝ Յուսուֆը (նույն տեղում): Անուններից

երևում է, որ նրանք, հավանաբար, պարսկացած արաբներ են եղել: Մեր կարծիքով դրա վկայությունն է նաև «Նիզամ» բառի բացատրությունը: Այդ բառը կապված է «Նազմ» արաբական արմատի հետ, որը նշանակում է շարել թելի վրա (օրինակ՝ մարգարիտ շարել թելի վրա), փոխաբերական իմաստով՝ «չափված», «հանդարտահոս» խոսք: Հենց բանաստեղծի լրիվ անունը նույնպես՝ շեյխ Նիզամեդ-դին-Աբու-Մուհամմեդ Իլյաս իբն-Յուսուֆ, դա է ասում: Բայց չնայած դրան, չնայած այն բանին, որ բանաստեղծի մայրը քուրդ էր (իր իսկ բանաստեղծի վկայությամբ), իսկ հայրը՝ պարսկացած արաբ (մեր կարծիքով): Նիզամին պարսիկ բանաստեղծ էր և պաշտոնի բերումով ծառայում էր Գանձակում: Նա մտածել և գրել է միայն մայրենի պարսկերենով:

Ասենք նաև, որ Նիզամու ընտրած գրական սյուժեները ևս ոչ մի կապ չունեն Ադրբեջանի և ադրբեջանցիների հետ:

Ինչպես հայտնի է, Նիզամին գրել է արևելյան բանաստեղծական արվեստի բոլոր ձևերով՝ քնարական բանաստեղծություններ, գազելներ, քառյակներ, ռուբայաթներ, քասիդներ և լայնաշունչ պոեմեր, որոնց մի մասն է միայն հասել մեզ: Սակայն նրա անթառամ փառքը, այնուամենայնիվ, էպիկական հինգ նշանավոր պոեմներն են, որոնք ամփոփված են «Խամսե» կամ «Փյանջ գյանջ»-հինգ գանձ («Հնգամատյան») ընդհանուր խորագիր կրող ժողովածուի մեջ: Այդ հինգ պոեմները սյուժետային առումով իրար հետ որևէ ընդհանրություն չունեն: «Հնգամատյանի» առաջին պոեմը «Գաղտնիքների գանձարանն» է, երկրորդը՝ «Խոսքով և Շիրին» սիրավեպը, որը կարելի է համարել Նիզամու ստեղծագործական խիզախումի գագաթը: Նիզամին այդ ստեղծագործությունը գրել է 1180 թվականին, նյութը Արեվելքում թափառող լեզենդն է պարսկական Սասանյան տան արքա Փերվիզ Խոսրովի և իշխանուհի, գեղեցկուհի Շիրինի ռոմանտիկական սիրո մասին:

Մյուս՝ «Լեյլի և Մեջնուն» վիպերգության (1188 թ.) թեման բեդուինների կյանքից վերցված արաբական մի հուզիչ զրույց է՝ սիրահար գույզի դժբախտ սիրո մասին: Իր սյուժեով այս վիպերգությունը նման է Եվրոպայում տարածված Ռոմեոյի և Ջուլիետի, կամ Տրիստան և Իզոլդայի ողբերգական սիրո պատմությանը:

Չորրորդ՝ «Յոթ գեղեցկուհիներ» պոեմում (1196 թ.) նկարագրված են Մասանյան արքա Բահրամ Գուրի ռոմանտիկական արկածները: Այն բաղկացած է յոթ պատումից, որի չորրորդ պատումի մեջ տողեր են նվիրված նաև «ռուսական թագուհուն»:

Վերջապես հինգերորդ և ամենաընդարձակ պոեմը «Ալեքսանդրի գիրքն» է («Իսքենդեր-Նամե»): Պոեմը Նիզամին սկսել է գրել «Յոթ գեղեցկուհիներից» հետո, բայց թե երբ է ավարտել այն, հավաստի տեղեկություններ չկան: Ստեղծագործության հերոսը Ալեքսանդր Մակեդոնացին է, սյուժեն՝ նրա արշավանքները և նվաճումները՝ արևելյան պատկերացումներով.

Ինչպես տեսնում ենք, Նիզամու պոեմներից ոչ մեկի թեման որևէ կապ չունի Ադրբեջանի և ադրբեջանցիների հետ: «Խամսեի» 30 հազար բեյթից (60 հազար տողից) ոչ մեկում հիշատակություն չկա ադրբեջանցիների մասին: Եվ չէր էլ կարող լինել, քանզի այն ժամանակ ներկայիս Ադրբեջանի տարածքում չկային ադրբեջանցիներ, հետևապես չէր էլ կարող լինել նրանց անվան հետ կապված աշխարհագրական հասկացություն, ինչպես նաև չէին կարող լինել ադրբեջանական ասքեր, պատումներ, պատմություններ:

Քասիդներում, գազելներում, քառյակներում նույնպես հիշատակություն անգամ չկա Ադրբեջանի և ադրբեջանցիների մասին: Այսպիսով, Նիզամու ստեղծագործությունների հերոսներից և ոչ մեկը ադրբեջանցի չէ: Մինչդեռ դրան հակառակ բանաստեղծի գրական ժառանգության մեջ Հայաստանը և հայերը զգալի տեղ են գրավում: Նա խորին հարգանք և սեր է տածել հայ ժողովրդի նկատմամբ, ջերմ տողեր նվիրել նրան: Իր նկարագրած հայ հերոսների մեջ բանաստեղծը տեսնում էր մարդկային բարձր առաքինություններով օժտված անհատների: Այդ բանը հատկապես ցայտուն է դրսևորված «Խոսրով և Շիրին» պոեմի մեջ, որի երկու գլխավոր գրական հերոսներից մեկը՝ Շիրինը, հայ է:

Բայց արի ու տես, որ ադրբեջանցի ազգայնամոլ գրականագետներն իրենց ուսումնասիրություններում խուսափում են նույնիսկ ասել, որ հանձին Շիրինի, Նիզամին մարմնավորել է հայ կնոջ, հայ մարդու ոգեշունչ կերպարը, էլ չենք խոսում այն մասին, որ նրանք երբեք չեն գրել, որ ամենայն հավանականությամբ Նիզամին ծանոթ է եղել

Խոսքովի և Շիրինի պատմության հայկական աղբյուրներին, մասնավորապես Սեբեոսի «Պատմությանը»: Դրա վկայությունը այն նմանություններն ու զուգադիպություններն են, որ կան Նիզամու պոեմի և Սեբեոսի պատմության միջև:

Նիզամու նկատմամբ հայերի հետաքրքրությունը մեծ է եղել բոլոր ութ հարյուրամյակներում: Պատահական չէ, որ պարսկական մեծ բանաստեղծի ստեղծագործությունները նկատելի ազդեցություն են գործել խոսքի միջնադարյան հայ վարպետների՝ Խաչատուր Կեչառեցու, Գրիգոր Ախթամարացու, Կոնստանտին Երզնկացու, Հովհաննես Թլկուրանցու, Սայաթ-Նովայի պոեզիայի վրա:

Պարսիկ մեծ բանաստեղծին ադրբեջանցիներն իրենց լեզվով կարդալու առիթ ունեցան միայն նրա հոբելյանի կապակցությամբ՝ 1938 թվականից հետո: Սուլեյման Ռուստամը ադրբեջաներեն թարգմանեց «Գաղտնիքների գանձարանը», իսկ Ռասուլ Ռզան՝ «Խոսքով և Շիրինը»: Միայն 1947 թվականին իրականացվեց «Խամսեի» ադրբեջաներեն հրատարակությունը հինգ հատորով: Նույն թվականին ադրբեջաներեն լույս տեսավ «Քնարերգություն» խորագրով ժողովածուն, որի մեջ զետեղված են Նիզամու գազելները, քասիդները, ռուբայաթները:

Տարօրինակ է, բայց փաստ՝ գերմանացիները, ռուսները, վրացիները, հայերը և ուրիշ ժողովուրդներ իրենց հարազատ լեզվով Նիզամուն ավելի վաղ են հաղորդակցվել, քան ադրբեջանցիները: Գերմանացիները, օրինակ, նրանցից 121 տարի առաջ են թարգմանել Նիզամուն (1818 թ), ռուսները՝ 113 տարի (1825 թ.), ֆրանսիացիները՝ 119 տարի (1829 թ.), անգլիացիները՝ 93 տարի (1846 թ.):

Սա է ականայից ժպիտ հարուցող իրականությունը:

Նիզամու՝ ադրբեջանցի բանաստեղծ՝ լինելու պնդումը ինչ-որ կերպ հիմնավորելու համար ինչպես օդ ու ջուր անհրաժեշտություն էր առաջացել ապացուցել, որ 12-րդ դարում գոյություն է ունեցել պոեզիայի ադրբեջանական դպրոց: Դա պետք է արվեր, որպեսզի Նիզամու ստեղծագործությունը հրամցվեր որպես այդ դպրոցի զարգացման տրամաբանական շարունակություն: Այս նպատակը Ե, Բերտելսը

հետապնդել է իր «Նիզամի և Ֆիզուլի» մենագրության երկրորդ գլխում, որ վերնագրված է՝ «Գրական կյանքը Ադրբեջանում 12-րդ դարում»: Մակայն այս գլխում վերլուծելով մի շարք անվանի բանաստեղծների ստեղծագործությունը և անելով ուշագրավ հետևություններ, Ե. Բերտելսը իր նպատակադրմանը հակառակ, կամա թե ակամա, բացահայտում է «պոեզիայի ադրբեջանական դպրոցի» պարսկական լինելը, դրանով իսկ նորից պարզ երևում է Նիզամու և պարսկական գրականության անխզելի միասնությունը:

Ելակետ ունենալով այն «իմաստությունը» որ աշխարհում անհնարին ոչինչ չկա, ադրբեջանցի գրականագետները շնչասպառ հեքով վարկածներ են ծնում՝ մեկը մյուսից անհեթեթ ու ապշեցուցիչ, «ապացուցելով», որ իրարից ոչնչով չեն տարբերվում գիտությունը և սոցիալությունը:

Ահա թե ինչու ադրբեջանական բերտելսյան, զիաբունիաթովական բացառիկ ֆենոմենը դեռ սպասում է իր հետազոտողներին:

Բնականաբար հարց է առաջանում. Ինչու են կեղծարարությանը տոն տալիս կենտրոնական, մոսկովյան հրատարակչությունները, առանձին ոչ ադրբեջանցի հետազոտողներ: Չէ՞ որ նման վարվելակերպով նրանք վիրավորանք են հասցնում հարևան պարսիկ ժողովրդին:

Ինչ խոսք հարցը տեղին է և ճիշտը կլինի, որ դրան պատասխանեն հենց իրենք՝ ադրբեջանական գրականությամբ զբաղվող կենտրոնի հետազոտողները, գրքերի խմբագիրները և հրատարակիչները, ինչպես, օրինակ, Խորհրդային մեծ հանրագիտարանի երրորդ հրատարակության, Մոսկվայում լույս տեսած Նիզամու ռուսերեն հինգհատորյակի խմբագրական կոլեգիաների անդամները: Դրանք այդպես են վարվում ոչ թե իրենց գիտական խղճի ու համոզմունքների թելադրանքով, այլ հաշվի առնելով զանազան հանգամանքներ, այդ թվում անձնական հարաբերությունները: Վերջապես ցավով պետք է նշել, որ առանձին ասպարեզներում հրապարակը մնացել է մարդկանց, որոնք կամ անտարբեր են խորհրդային հասարակական գիտությունների

մեջ կատարվող խառնակությունների նկատմամբ, կամ ուղղակի իրենք են տոն տալիս ու նպաստում պատմության, արվեստի և այլ կարգի կեղծարարներին: